# ԽՈՇՈՐ ԱՐՁԱԿԱԳԻՐ, ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՎ ՀՄՈՒՏ ԽՄԲԱԳԻՐ

## ԱՅՍ ՏԱՐԻ ԼՐԱՆՈՒՄ Է ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ԱՄՅԱԿԸ



Հայ արձակ գրականության խոշոր վարպետ Վահան Թոթովենցը այնպիսի արվեստագետ էր, որի ստեղծագործությունը թել առ թել հյուսված է ժամանակի պահանջներից: Նրա լավագույն երկերը, համարյա առանց բացառության, գրված են աշխատավոր ժողովրդի տրտմություններն արտահայտելու, ցավերն ամոքելու մեծ ու ազնիվ նպատակով: Նա չունի ինքնանպատակ գործեր: Թոթովենցը իր ստեղծագործություններին մեծ մասամբ չափ ու ձև է տվել դարի ոգուն համապատասխան:

Վահան Հովհաննեսի Թոթովենցը ծնվել է 1894 թվականին Արևմտյան Հայաստանի Խարբերդի գավառի Մեզրե քաղաքում: 1907 թ. ավարտել է Խարբերդի Ազգային կեդրոնական վարժարանը՝ աշակերտելով Հ. Թլկատինցուն և Ռ. Զարդարյանին: 1907-ին Զմյուռնիայի "Արևելյան մամուլ"-ում լույս է տեսել նրա առաջին "Արտույրի կայլակներ" բանաստեղծությունը:

1908 թվականին Վահան Թոթովենցը մեկնել է Կոստանդնուպոլիս, հրատարակել իր առաջին գրքույկը ("Ավերակ"), 1909-ին՝ մեկնել է Փարիզ, ապա՝ Նյու Յորք: 1912 թվականին ընդունվել է Ուիսքոնսընի համալսարանը, հետևել գրականության, պատմության և փիլիսոփայության դասընթացներին, սովորել է անգլերեն, ֆրանսերեն, ուսումնասիրել համաշխարհային դասական գրականությունը: 1915-ին մասնակցել է կամավորական շարժմանը, կռվել Վանում և Էրզրումում: Հովհաննես Թումանյանի հետ հասարակական լայն գործունեություն է ծավալել, օգնել գաղթականներին: 1917-1918 թվականներին Թիֆլիսում խմբագրել է "Հայաստան" թերթը, մասնակցել Անդրկովկասի, Պոլսի և այլ հայաշատ վայրերի մշակութային կյանքին: Նա 1916-1920-ին հրատարակել է "Իմ հորաքույրը", "Տոնոն" սոցիալական վիպակները, "Ողբ անմահության", "Արևելք" պոեմները, "Դոկտոր Բուրբոնյան" երգիծական վեպը, արձակ բանաստեղծություններ, բանասիրական ու գրականագիտական հոդվածներ, որոնց մեջ արտահայտված է նրա մտահոգությունը հայ ժողովրդի ազգային-քաղաքական ճակատագրի նկատմամբ: Վահան Թոթովենցի համոզմամբ հայ ժողովրդի բախտը կապված է ռուս ժողովրդի բախտի հետ:

Ժամանակի քաղաքական իրավիճակից հիասթափված, Թոթովենցը թողել է Կովկասը և մեկնել Կ. Պոլիս: Իր ինքնակենսագրականում նա գրում է. "Ապրեցի այնտեղ ընդամենը մի քանի ամիս և ճանապարհ ընկա դեպի Հարավային Եվրոպայի կախարդական ափերը, Արշիպելագոսի կղզիները":

1922 թվականին Թոթովենցը վերադարձել է Հայաստան, ապրել է Երևանում:

Վահան Թոթովենցը գրական տարբեր ժանրերում՝ արձակ և չափածո, փորձեր է արել գրեթե միաժամանակ: Հետագայում նա պոեզիային անդրադառնում էր շատ հազվադեպ, առավելապես թեքվելով դեպի արձակն ու դրամատուրգիան:

1916-1920 թվականները Թոթովենցի համար ստեղծագործական բուռն շրջան եղան: Բացի խմբագրական-հասարակական գործունեությունից, նա լարված կերպով աշխատում էր նաև գեղարվեստի ոլորտում: Այս էտապում Թոթովենցի գլխավոր թեմատիկան առնչվում էր հայ ժողովրդի ու Հայաստանի սոցիալ-քաղաքական ճակատագրի պրոբլեմին "Ողբ անմահության", "Արևելք", "Դոկտոր Բուրբոնյան" և այլն:

Թոթովենցը եռանդով աշխատակցում էր մի շարք գրական-գեղարվեստական պարբերականների, վարում էր հասարակական լայն գործունեություն: Նա խմբագրում էր "Ճեշտ" երգիծական ամսագիրը: Մեկը մյուսի հետևից հրատարակվում են նրա "Մահվան բատալիոն", "Պողպատի ճաշ", "Նոր Բյուզանդիոն", "Սասնա ծռեր", "Հրդեհ" դրամատիկական արժեքավոր ստեղծագործությունները:

1929-1930 թվականներից սկսած մինչև կյանքի վերջը (կրպարտվել և ձերբակալվել է 1937 թվականին) Թոթովենցը արվեստագետի իր թևերը լայնորեն բացում է խիզախ թռիչքների, ստեղծում է այնպիսի գործեր, որոնք գրականության "հավիտենական սեփականությունն են":

Գեղարվեստական պատմվածքն ու վեպը գրական այն տեսակներն են, որոնց մեջ փայլատակեց Թոթովենցի տաղանդը: Նրա պատմվածքներն ու նովելները վարպետության առումով կարող են դրվել հայ դասական պատմվածքագիրների լավագույն երկերի կողքը:

Վահան Թոթովենցն իր ռեալիզմը հիմնովին խարսխելով ժողովրդական կենսափիլիսոփայության վրա՝ ժողովրդի ընդերքից երևան հանեց այնպիսի երևույթներ, սոցիալ-հոգեբանական այնպիսի կողմեր, որոնք գրողի ստեղծագործական փինանցի անկրկնելի վենքերն են: Նրա գեղարվեստական վարպետացումը տեղի էր ունենում կերպարների հոգեբանական խորացման և ոճի բյուրեղացման ուղղությամբ: Թոթովենցը ցույց էր տալիս, որ տիրող պայմաններում, դասակարգային անհաշտելի հարաբերությունների մեջ անհատի ճակատագիրը կախված է բազում պայմանականություններից: Հանդիպելով դաժան իրականության էգոիստական պատնեշին, փշրվում են մաքուր կզացմունքները, խորտակվում են ազնիվ սրտերը, այլանդակվում են հոգիները: Սոցիալական այս ողբերգությունն են մարմնավորում Թոթովենցի պատմվածքները, խանգարված, շավղից դուրս սայթաքած մարդկանց ողբերգությունը: Ահա թե ինչու անպակաս ու անբաժան է այրող ցավը, ահա թե ինչու համարյա միշտ առկա է թախծի շղարշը:

Երբ կուտակված տպավորությունները չէին տեղավորվում փոքր ժանրի ոլորտներում, գրողը անհրաժեշտաբար դիմում էր վիպական հյուսվածքին: Թոթովենցի առաջին արժեքավոր վեպը "Դոկտոր Բուրբոնյան" երգիծական ստեղծագործությունն է: Սա գրողի երգիծական ժառանգության գլուխգործոցն է՝ ուղղված այն "ազգայինների" դեմ, որոնք աշխատավոր ժողովրդին թողնում են օտարների "բարեգութ խնամքին", որոնք "ամեն հույս ու ակնկալություն դնում էին օտար պետությանց սուտի և խաբեության կացնի տակ, հանձնում էին մեր հպարտության բոլոր ղեկերը Եվրոպայի "հայրենասերների" տրամադրությանն ու կեղծ ժպտին": Դրա համար էր հեղինակը ցավով շեշտում, թե՝ "... Այս վեպը գրած եմ, որպեսզի մարդիկ կարդան և դառնապես արտասվեն":

1922 թվականին տպագրվում է Թոթովենցի "Փոթորիկին մեջ" ծավալուն վեպը, նվիրված "ռուսական մեծ հեղափոխության առաջին օրերի կյանքին": Այնուհետև Թոթովենցի վիպասանական տաղանդը ծավալվեց 1930-ական թվականների "Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա", "Բաքու", "Հրկիզված թղթեր" և "Հովնաթան, որդի Երեմիայի" գործերում:

"Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա" երկը Թոթովենցի լավագույն երկերից մեկն է, խոր ընդհանրացումների, արվեստագետի բուռն տարերքի մի արտահայտություն, որ կարմացնում է քնարական ու էպիկական հյուսվածքի միաձույլ ներդաշնակությամբ: Հեղինակը խտացրել է այստեղ գրող արվեստագետի իր ամենաբնորոշ հատկությունը՝ կյանքի սովորական փաստերի ինքնատիպ ընդհանրացում՝ երևույթների պոետականացման միջոցով: Բանաստեղծ-արձակագիր է Թոթովենցը, նրա յուրաքանչյուր երկ՝ փոքրիկ պատմվածքից սկսած մինչև ստվարածավալ վեպը, թաթախված է քնարական պեղումներով, պոետական հոգու ջերմությամբ:

Տասնյակների են հասնում Թոթովենցի ակնարկները, պատկերները, էսքիզները գրականության և արվեստի տարբեր ճյուղերի մասին գրված տեսությունները ու հոդվածները: Այդ ամենով հեղինակը մի սրբազան նպատակ էր հետապնդում՝ ծառայել ժողովրդին, ամեն կերպ օժանդակել հոգևոր կարգացմանը, նրա առաջընթացի մեծ գործին:

Հարուստ ու արժեքավոր է Թոթովենցի գրական վաստակը: Խոր բովանդակությամբ, այժմեականության ճշմարիտ կզացողությամբ այդ վաստակը շատ մնայուն լարերով հյուսվում է մեր օրերի հետ, առաջացնում կենդանի խոհեր ու կզացմունքներ: Գոգոլի մարգարեական խոսքերով Թոթովենցին վիճակված է դեռևս երկար ճանապարհ կտրել, շատ ապրել ձեռքը-ձեռքի տված իր հերոսների հետ, դիտել կյանքը "աշխարհի տեսանելի ծիծաղի և աշխարհին անտեսանելի, անհայտ արցունքների միջով":

Սևակ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

### ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Նա տաղանդավոր գրող էր: Նրա "Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա" հիանալի գործ է և մնայուն...

... Նա շատ ու շատ հայրենասեր մարդ էր, հայ ժողովրդին, հայ կուլտուրան սիրող ու պաշտող:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

* * *

Սրտի ամենամեծ ուրախությամբ գրում եմ քեզ այս նամակը, որովհետև այս ուրախությանը վաղուց սպասում էի և կատարվեց: Դա քո գյուտն էր այն ձևով, ինչ որ պատկերացրել էի մի ժամանակ, կզում էի և գիտեի, որ չեմ սխալվում: Խոսքս պատմվածքներիդ Ա շարքի մասին է: ... Կարդացի ամենամեծ հաճույքով, անկեղծ, սրտաբաց ծիծաղով՝ այդ շարքը, գտա նրանց մեջ կտորներ, որ շեղևր են ամեն գրականության:

Շատ ուրախ եմ, որ չեմ սխալվել և առավելապես ուրախ եմ, որ այդքան կատարելության հասցրել ես արձակդ: Բոլորը լավ են՝ կարճ, կենդանի, սրամիտ, տիպերը հարազատ, նուրբ և հումորը սրամիտ ու անփույթ, անկեղծ:

Դերենիկ ԴԵՄԻՐՃՅԱՆ

* * *

Թոթովենցը գրում է վարժ, աշխույժ, ունի երգիծողի անկասկածելի շնորհք:

Ստեփան ԶՈՐՅԱՆ

* * *

Իր գողտրիկ պատմվածքներով և նովելներով Թոթովենցը կարճ ժամանակ նվաճեց ընթերցող լայն մասսաների սերն ու համակրանքը:

Վահրամ ԱԼԱԶԱՆ